Լավությո՛ւն արա, ջուրը գցիր՝ մի օր առջաջդ կգա:

ԲԱՐԵԳՈՐԾ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ «ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ»

BAREGORTS, հոկտեմբեր - նոյեմբեր 2024, № 3 (63), БАРЕГОРЦ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամն» այսօր էլ շարունակում է աջակցել բռնի տեղահանված արցախցիներին

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» կատարած գործունեության մասին Արցախում, հատկապես Քաշաթաղի շրջանում, շատ ենք անդրադարձել:

David and Erin with Lilit Khachatryan family

Հիմնադրամն այսօր էլ, իր գործադիր տնօրենի՝ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի նախկին դեկան, Բերձորի պատվավոր քաղաքացի, Արցախյան ազատամարտին մեծ աջակցություն ցուցաբերած պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանի գլխավորությամբ, շարունակում է աջակցել տեղահանված արցախցիներին: Արցախյան 44-օրյա պատերազմից հետո Քաշաթաղի շրջկենտրոն Բերձորում, հարևան Ներքին Սուս և Աղավնո գյուղերում շարունակում էին ապրել մեր հայրենակիցները: «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը», մինչև 2022թ. կեսերը, քանի Արցախն ամբողջովին շրջափակված չէր, կենցաղային տեխնիկա, սնունդ, հագուստ և այլ կարևոր իրեր էր հասցնում այս բնակավայրերի, Բերդաձորի, Ստեփանակերտի և այլ տարածքների կարիքավորներին: Մի քանի անգամ միասին ենք գնացել Արցախ: Դրան զուգահեռ՝ նաև աջակցում էր ՀՀ-ում բնակություն հաստատած արցախցիներին նյութապես, նաև ուսանողներին ուսման վարձավճարներ տրամադրելով: Հիմնադրամի աշխատանքները գնահատելով՝ բարեգործական ծրագրերին աջակցում են նաև միջազգային որոշ կազմակերպություններ: Այս օրերին Երևանում են Կանադայի «Գլոբալ Մեդիկ» կազմակերպության ներկայացուցիչները՝ Էրին ու Դեյվիդը, ովքեր «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» նախագահ Գ. Մելիքյանի և հոգաբարձուների խորհրդի անդամ Մարատ Գրիգորյանի հետ սեպտեմբերի 29-ին այցելեցին Քաշաթաղի շրջանից տեղահանված 5 բազմազավակ ընտանիք: Հիմնադրամի կողմից ընտանիքներին հատկացվեց Կանադայից ստացված նոր հագուստեղեն, իսկ «Գլոբալ Մեդիկ»-ի կողմից՝ սնունդ: Տեղահանված ընտանիքներից 4-ը մինչ 2020թ. 44-օրյա պատերազմը բնակվում էին Քաշաթաղի շրջանի Միրիկ գյուղում, որը գտնվում է Աղավնո գետի աջակողմյան բարձրադիր դիրքում: Աննա Կարապետյան և Գագիկ Աղամյան ամուսիններն ունեն 4 երեխա: Նրանց ընտանիքը 2000թ. է Արտաշատից բնակություն հաստատել Միրիկում: Այժմ վարձով են բնակվում Երևանում: Բենիամին

David and Erin with Laura Sargsyan family

Կարապետյանն ունի 4 երեխա. բնակվում են Երևանում: Լիանանա Մանուկյանն ունի 6 երեխա, որոնցից 4-ը սովորել են Միրիկի միջնակարգ դպրոցում: Այժմ երեխաներից 3-ը դպրոցական են: 1998-ին Հրազդանից են տեղափոխվել Միրիկ: Կարեն Բլբուլյան և Լաուրա Սարգսյան ամուսիններն ունեն 8 երեխա. Բնակվում են Արմավիրի մարզի Ջրառատ գյուղում: Ավագ որդին՝ Սահակը, զինվորական է: Այժմ 9-րդ դասարանում սովորող Վիկտորյան 4 տարի սովորել է Միրիկի միջնակարգ դպրոցում, կարոտով է հիշում այդ երանելի օրերը: Քաշաթաղի շրջանի Ղազարապատ գյուղը գտնվում է

Շալուա գետի աջակողմում, ժամանակին մտնում էր Մեծ Հայքի Արցախ նահանգի կազմում: Տարածքի բացառիկ բնակավայրերից է. մինչև 1918 թ. եղել է բացարձակ հայաբնակ՝ 4 կողմից շրջապատված մահմեդականներով բնակեցված նախկին հայկական բնակավայրերով: Գյուղի վերահայացման տարիներին Լիլիթ Խաչատրյանն ամուսնու հետ բնակություն հաստատեցին այս գյուղում: Ունեն 6 երեխա: Լիլիթի ամուսինը զոհվեց դժբախտ պատահարից: Երեխաները ժամանակին սովորում էին Ղազարապատի դպրոցում: Սակայն 44-օրյա պատերազմի ընթացքում ընտանիքով տեղափոխվեցին Արարատի մարզ և բնակվում են Նորամարգ գյուղում: Տունը գնել են ՀՀ կառավարության կողմից հատկացված հավաստագրով: Զավակներից 2-ը սովորում են Նորամարգի միջնակարգ դպրոցում, դուստրերից Սեդան՝ քոլեջում: Որդիներից Հայկ Մկրտչյանը հայոց բանակի զինվոր է: Աջակցություն ստացած արցախցիները շնորհակալություն հայտնեցին, կարևորեցին Գ. Մելիքյանի և նրա ղեկավարած հիմնադրամի դերը, որ որոշ չափով մեղմացնում է իրենց ծանր հոգսերը և ամրապնդում ապագային հույսերը: Հիմնադրամի աշխատանքից գոհունակություն էին հայտնում նարև իրենց մարդասիրական առաքելությունն իրականացնող կանադացի հյուրերը: Գ. Մելիքյանն ասաց՝ մշտապես պատրաստ է աջակցել արցախցիներին հնարավորությունների սահմաններում:

With Lianna Manukyan family

Gurgen, Erin and David

Gurgen Melikyan's Multichildren Family Foundation for Kashatagh continues to support forcibly displaced families from Artsakh . These days, the representatives of Canada's Global Medic organization, Erin and David, are in Yerevan, who with the executive director of the foundation, Gurgen Melikyan and board member Marat Grigoryan visited 5 forcibly displaced families from Kashatagh region on September 29th. The Foundation distributed brand new clothing from Canada to the families, and "Global Medic" provided food. Those who received support thanked Gurgen Melikyan and the foundation, which alleviates their needs to some extent. The Canadian guests were also satisfied with the work of the foundation.

The foundation is grateful to Global Medic team for organizing the 4th visit to Armenia to help Artsakh people who are greatly in need of care, love and support. The Foundation expresses its deepest gratitude to David Hahn and his son, Andrew, who made contribution to the foundation

A note from David: *"Erin and I had the privilege of joining Gurgen on the delivery of relief supplies to five different families from the Artsakh region. It was quite something to watch the children's faces light up as he gave them new clothes, blankets, and boots. These items, along with canned food and staples, provides some much needed light to these struggling families. Thank you to the Gurgen Melikyan Multichildren Family Foundation of Kashatagh for their commitment to helping!", noted David Hahn.*

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներին հիմնադրամ»-ի հերթական աջակցությունը Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին

Անցած տարի Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցներից շատերն ունեն նյութական աջակցության մեծ խնդիր: Այդ ասպարեզում ջանադիր առումով իր արդյունավետ գործունեությունն է շարունակում Քաշաթաղի վերաբնակեցման առաջին օրերից կազմավորված «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ը: Մինչ Արցախյան 44-օրյա պատերազմը՝ հիմնադրամը ծավալուն աջակցություն էր ցուցաբերում Քաշաթաղի շրջանում բնակվող բազմազավակ ընտանիքներին, ինչպես նաև՝ սոցիալապես անապահովներին: Հիմնադրամը տարիներ շարունակ ինչպես

Լուիզա Մկոյանի ընտանիքում

Հայաստանում,այնպես էլ Արցախի բուհերում սովորող բազում ուսանողների ուսման վարձն է հոգացել ամբողջական կամ մասնակի: Պատերազմից հետո «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ը, Գուրգեն Մելիքյանի գլխավորությամբ, ավելի էր ծավալել իր առաքելությունն արդեն Արցախի տարբեր շրջաններում ու մայրաքաղաքում, թեև մինչ այդ էլ Արցախի այլ բնակավայրերի շատ բնակիչներ են նյութական աջակցություն ստացել հիմնադրամից: Արդեն մեկ տարի և ավելի է՝ հիմնադրամի գործադիր տնօրենը հոգաբարձուների խորհրդի անդամների հետ, երբեմն նաևարտերկրից հիմնադրամին աջակցող

Նարեկ և Ներսես Հակոբյանների ընտանիքում

կառույցների ներկայացուցիչները, այցելում են Երևանում և մարզերում բնակություն հաստատած արցախցի բազմազավակ ընտանիքներին, ցուցաբերում սննդի, հագուստեղենի և այլ նյութական աջակցություն: Հոկտեմբերի 12-ին կայացավ հերթական այցը Գեղարքունիքի մարզ: Հիմնադրամի գործադիր տնօրեն, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի նախկին դեկան Գուրգեն Մելիքյանը, հոգաբարձուների վարչության խորհրդի նախագահ, հայ բանասիրության ֆակուլտետի նախկին դեկան Արծրուն Ավագյանը, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի նախկին դեկան Մարատ Գրիգորյանը և «Ապառաժ» լեռնագնացության ակումբի մարզիչ Սուրեն Սեփանյանը հերթական այցով եղան Գեղարքունիքի մարզի Զովաբեր, Վարսեր գյուղերում և Սևան քաղաքում: Շահառու 5 ընտանիքի հատկացվեց սնունդ և նոր հագուստ: 2023 թ. սեպտեմբերի վերջերից Զովաբեր գյուղում են ապաստանել Արցախի Մարտակերտի շրջանի Առաջաձոր գյուղից եղբայրներ Նարեկ և Ներսես Հակոբյանների և Մարտակերտ քաղաքից Գենադի Հյուսնունցի ընտանիքները: Զովաբեր գյուղի վարչական ղեկավարի աշխատակազմի ներկայացուցիչ Հայկ Շահբազանի ուղեկցությամբ այցելություն եղավ այդ ընտանիքներին: Նարեկն ունի 5 երեխա: Դպրոցականները

Գենադի Հյուսնունցի ընտանիքում

հաճախում են Զովաբերի միջնակարգ դպրոց: Նրանցից 6-րդ դասարանցի Նանեի ծննդյան օրն էր. բնական է՝ ստացավ շնորհավորանք ու իր կրկնակի նվերը: Ներսեսն ունի 8 երեխա: Եղբայրների ընտանիքները բնակվում են միասին: Գ. Հյուսնունցի ընտանիքը 7 երեխաներով բնակվում է գյուղի մեկ այլ տան մեջ: Գոհ են զովաբերցիներից, որ իրենց ընդունել են հարազատի պես: Լուիզա Գագիկի Մկոյանի ընտանիքը 4 երեխաներով բնակվում է Վարսեր գյուղում վարձակալած առանձնատանը: Ընտանիքի հայրը զոհվել է Արցախյան պատերազմում: Լուիզան ունի առողջական ծանր խնդիրներ: Արտիկ Հովսեփյանի ընտանիքը բնակվում է Սևան քաղաքում՝ բազմաբնակարան շենքում: Տարածքում բնակվող բազմազավակ արցախցիներին հանդիպելու համար հիմնադրամի անդամներին օժանդակեց տիկին Ռուզաննա Նահապետյանը, որին Գ. Մելիքյանը շնորհակալություն հայտնեց: Հիմնադրամից օգնություն ստացած ընտանիքները հայտնեցին իրենց գոհունակությունը՝ ստացած աջակցության համար: Գ. Մելիքյանը հավաստիացրեց, որ աջակցությունը լինելու է շարունակական:

Զոհրաբ Ըռքոյան

ՕԳՆԵՆՔ ԱՐՑԱԽԷՆ ՏԵՂԱՀԱՆՈՒԱԾՆԵՐՈՒՆ

«ԳՈՒՐԳԷՆ ՄԵԼԻՔԵԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ (Արցախ) ԲԱԶՄԱԶԱՒԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ»

Արցախեան առաջին պատերազմին մեր յաղթանակէն ետք՝ 1995 թ., ստեղծուեցաւ «Գուրգէն Մելիքեանի՝ Քաշաթաղի բազմազաւակ ընտանիքների հիմնադրամը»՝ մեր հաղթանակին մէջ կարեւոր դերակատարութիւն ունեցած ազգանուէր ու խիզախ հայորդի Փրոֆեսոր Գուրգէն Մելիքեանի անունով եւ ինքն ալ դարձաւ հիմնադրամի գործադիր տնօրէնը: Ան իր շուրջ համախմբեց նուիրեալ հայորդիներէ կազմուած հոգաբարձութեան խորհուրդ: Վերջինիս առաջարկութեամբ ստեղծուեցաւ «Բարեգործ» պաշտօնաթերթը, որու էջերուն մէջ պարբերաբար հաշուետուության պէս կը ներկայացուի հիմնադրամի գործունէութիւնը: Բոլոր ֆինանսական գործարքները հիմնադրամը կը կատարէ դրամատնային համակարգով՝ ապահովելով հիմնադրամի և նուիրատուներու փոխվստահութիւնը:

Սրտացաւ հայրենակիցներու շնորհիւ (Հայաստանի Հանրապետութիւն եւ Սփիւռք) Հիմնադրամը իրականացուցած է բազմաթիւ բարեգործական ծրագիրներ, որպէսզի վերացուին Արցախի ազատագրութեան պատերազմին պատճառած աւերները: Յատկապէս ուշադրութիւն դարձուած է ազատագրուած տարածքներէն Քաշաթաղի շրջանին: Նորոգուած են կամ հիմնուած են մանկապարտէզներ, դպրոցներ եւ բնակարաններ: Մասնաւոր օգնութիւն տրուած է վիրաւոր ու հաշմանդամ ազատամարտիկներուն եւ կարիքաւոր բազմազաւակ ընտանիքներուն: Տարբեր տեսակի օգնութիւն ցուցաբերուած է անվճարունակ ուսանողներու: Պարբերաբար կատարուող ուսանողական արշաւներ բարձրացուցած են արցախահայութեան ոգին:

Հարկաւոր է ձեր ուշադրութեան յանձնել, որ 2023 թ. Սեպտեմբերի վերջերուն Արցախի բռնի հայաթափումէն և 100 հազարէ աւելի արցախցիներու Հայաստանի տարբեր այրերու մէջ վերաբնակեցումէն ետք, էապես փոխուած են հիմնադրամի գործունէութեան նպատակներն ու խնդիրները: Այժմ հիմնադրամին ուշադրութիւնը կեդրոնացած է **տնազուրկ, գործազուրկ, ամէն ինչ կորսնցուցած, հոգեկան ու բարոյական ծանր նուաստացումներու ենթարկուած մեր հայրենակիցներու** բազում կարիքներուն եւ հոգսերուն շուրջ:

Լոս Անճելըսի համեմատաբար աւելի բարեկեցիկ մեր հայրենակիցները չեն զլացած իրենց բարոյական եւ նիւթական աջակցութեամբ էական օգնութիւն ցոյց տալ մեր հայրենի ժողովուրդին բազում կարիքներուն, հետեւեաբար այսօր հրամայական կը դառնայ ատամներու սեղմումով եւ ԱՄԷՆ ԳՆՈՎ օգնելու «Գուրգէն Մելիքեան» հիմնադրամին, որպէսզի մեր բռնազաղթուած հայրենակիցները ՄՆԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ սահմաններէն ներս, չգաղթեն ու չլքեն Արցախի մերձակայ տարածքները:

Սոյն գրութեամբ կոչ կ՚ուղղենք մեր սփիւռքահայ հայրենակիցներուն սատար կանգնելու հիմնադրամի ջանքերուն: Այս նպատակով կազմակերպուած է հանդիսութիւն-դրամահաւաք, որ պիտի կայանայ Նոյեմբեր 16-ին, Bellezza Banquet Hall (11009 Burbank Blvd, North Hollywood), ժամը 18:00-ին (*): Ներկայ պիտի ըլլայ նաեւ հիմնադրամի հիմնադիր սիւնը՝ Փրոֆ. Գուրգէն Մելիքեանը:

Այն հայրենակիցները, ովքեր տարբեր պատճառներովանձամբ մասնակցելու հնարաւորութիւն պիտի չունենան, կրնան իրենց տրազերծ (tax-deductible) նուիրատուութիւնները ղրկել հետեւեալ հասցէին: GMMCFF, 501 W. Glenoaks blvd, #104, Glendale 91202:

Համադրեց հիմնադրամին սատարող եւ մասնակից՝
Դոկտ. Մինաս Գոճայեան 15 Հոկտեմբեր 2024

2024 թվ.- ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՎՃԱՐՎԱԾ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐ

Հ/h	Ամսաթիվ	ԲՈՒՀ	Նպատակ	Գումար
1	14/10/24	ՀՊՏՀ հիմնադրամ	Աբրահամյան Մելինե, տնտեսագիտություն 4-րդ կուրս	50000
2	14/10/24	ԵՊՀ հիմնադրամ	Քոչարյան Ժակլին, համաշխարհային քաղաք. մագիստր 4-րդ կուրս	50000
3	14/10/24	Վ.Բրյուսովի անվան համալսարան	Զեյնալյան Լուիզա, թարգմ. 3-րդ կ.	80000
4	14/10/24	Մխ. Հերացու անվան ԵՊԲՀ	Ղազարյան Մոնիկա, ընտանեկան ստոմ.օրդին. 2-րդ կուրս	80000
5	14/10/24	Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ	Բաղդասարյան Արաքսյա, հոգեբան. 4-րդ կուրս	80000
6	14/10/24	Վ.Բրյուսովի անվան համալսարան	Մելքոնյան Ջենի, ԼՄՖ, լեզվաբան.անգլ. 4-րդ կուրս	80000
7	14/10/24	ՀԱԱՀ հիմնադրամ	Նամոյան Մաքսիմ, պարենամթերքի տեխնոլ. 3-րդ կուրս	80000
8	14/10/24	Վ.Բրյուսովի անվան համալսարան	Խաչատրյան Մարի, տուրիզմ 2-րդ կուրս	80000
9	14/10/24	ՀՊՏՀ հիմնադրամ	Գևորգյան Սոնա, ֆինանսներ 4-րդ կ.	80000

10	14/10/24	ՀՖԿՍՊԻ հիմնադրամ	Բշարյան Գրիշա, բռնցքամարտ 2-րդ կուրս	80000
11	14/10/24	ԵՊՀ հիմնադրամ	Համեյան Սամվել, միջազգային հարաբ. 3-րդ կուրս	80000
12	14/10/24	ԵՊՀ հիմնադրամ	Նազարյան Ալբերտ, կովկասագիտ. 2-րդ կուրս	80000
13	14/10/24	ԵՊՀ հիմնադրամ	Աբրահամյան Վարուժան, կովկասագիտ. 2-րդ կուրս	80000
14	14/10/24	ԵՊՀ հիմնադրամ	Մնջոյան Շամիր, հանրային կառավարում 4-րդ կուրս	80000
15	14/10/24	ԵՊՀ հիմնադրամ	Ալեքսանյան Կրիստինա, սփյուռքագիտ մագիստր 2-րդ կուրս	100000
16	14/10/24	ԵՊՀ հիմնադրամ	Նոշաղյան Մոթլաղ Արեգ, թյուրքագիտ. 3-րդ կուրս	100000
17	14/10/24	ԵՊՀ հիմնադրամ	Գրիգորյան Մարիամ, իրանագիտ. 3-րդ կուրս	100000
18	14/10/24	ԵՊՀ հիմնադրամ	Թամոյան Գյուլփերի, դեղագործություն և քիմիա 2-րդ կուրս	100000
19	14/10/24	ԵՊՀ հիմնադրամ	Խաչատրյան Մարիամ, հայ բանասիր. 2-րդ կուրս	100000
20	14/10/24	ԵՊՀ հիմնադրամ	Պողոսյան Նարե, աշխարհ.և երկրաբան մագիստր 1-ին կուրս	100000
21	14/10/24	ԵՊՀ հիմնադրամ	Իսրայելյան Իրինա, թյուրքագիտ 4-րդ կուրս	10000
22	14/10/24	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ	Ադոնց Հովհաննես, դեղագիտ.մագիստր. 1-ին կուրս	100000
23	14/10/24	ԵՊՀ հիմնադրամ	Ղազարյան Վիլյամ, ԻԿՄ 4-րդ կուրս հեռակա	100000
24	14/10/24	Մ.Խորենացու անվան համալսարան	Մկոյան Ալբերտ, կիրառ.մաթեմ և ինֆորմատիկա 2-րդ կուրս	100000
25	14/10/24	ՃՇՀԱՀ հիմնադրամ	Խաչատրյան Վիկտորյա, արդյունաբեր.դիզայն 2-րդ կուրս	100000
26	14/10/24	Երևանի ինֆորմատիկայի պետ. քոլեջ	Ոսկանյան Հայկ, վեբ.դիզայն 2-րդ կուրս	100000
27	14/10/24	Լոմոնոսովի անվ համ. Երևանի մ/ճ	Բախշյան Հրայր, տնտեսագիտ. 4-րդ կ.	100000
28	14/10/24	ՀԱԱՀ հիմնադրամ	Ալեքսանյան Ռազմիկ, հողային և ջրային ռեսուրս ճարտարագիտ, մագիստր 2-րդ կուրս հեռակա	100000
29	14/10/24	Հայաստանի Ամերիկյան համալսարան	Աբրահամյան Սոֆի, միջազգային հարաբ.մագիստր 2-րդ կուրս հեռակա	100000
30	14/10/24	Մեհրաբյանի անվ բժշկ քոլեջ	Շեկյան Սրբուհի, քույրական գործ 2-րդ կուրս	100000
31	14/10/24	ՃՇՀԱՀ հիմնադրամ	Ոսկանյան Լուսինե, դիզայն մագիստր 1-ին կուրս	150000
32	14/10/24	Հերացու անվան ԵՊԲՀ	Թանգամյան Շանթ, ընդհանուր բժշկություն 3-րդ կուրս	150000
33	14/10/24	ԵՊՀ հիմնադրամ	Ասատրյան Վարսենիկ, համաշխարհ.պատմ մագիստր II կ.	150000
34	14/10/24	ԵՊՀ հիմնադրամ	Ավետիսյան Անի, ԻԿՄ 3-րդ կուրս	200000
35	14/10/24	ՀԱՊՀ հիմնադրամ	Սիմոնյա Էդգար, արհեստական բանականություն 2-րդ կուրս	200000
36	14/10/24	ՀՊՏՀ հիմնադրամ	Նուրբեկյան Ինեսա, մարքեթինգի և բիզնեսի կառավարման ֆակ 1-ին կ.	200000
37	14/10/24	Հայկական բժշկական ինստիտուտ	Նանայան Հարություն, ստոմատոլոգիա 4-րդ կուրս	200000
38	14/10/24	Հայկական բժշկական ինստիտուտ	Աջամօղլյան Հայկազ, ստոմատոլոգիա 3-րդ կուրս	200000

39	14/10/24	Վ.Բրյուսովի անվան համալսարան	Գալոյան Քնարիկ, միջմշակ հաղորդ, անգլերեն 3-դ կուրս	200000
40	14/10/24	Հայաստանի Եվրոպական համալսարան	Իգիթխանյան Յուլյա, լեզվաբան. III կ.	200000
41	22/10/24	ԵՊՀ հիմնադրամ	Յավրումյան Մարիամ, ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետ, սոցիալական աշխատանք, 3-րդ կուրս	100000
Ընդամենը				**4420000**

2024 թվ. ՍՏԱՑՎԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ (սկիզբը նախորդ համարում)

Հ/h	Ամսաթիվ	Անուն, ազգանուն	Վճարման նպատակ	Գումար	Համարժեք
1	02/09/2024	Global Medic-Canada, Katelyn & Jackson	Օգնություն	18500	
2	06/09/2024	Global Medic-Canada Katelyn & Jackson	For food	74000	
3	12/09/2024	Հովհաննիսյան Վոլոդյա	Օգնություն	60000	
4	16/09/2024	Այֆա Ֆուդ Սերվիս ՍՊԸ	Բարեգործություն	200000	
5	25/09/2024	Մանուկյան Վրեժ	Օգնություն գրքերի ծրագիր	20000	
6	25/09/2024	Կատյա Քուշերյան	Օգնություն	1930000	5000 USD
7	27/09/2024	Ժիրայր Քոչարյան	Օգնություն	22000	50 EUR
8	30/09/2024	David & Andrew Hahan	For displaced families of Artsakh	39000	100 USD
9	30/09/2024	Global Medic	Օգնություն	87584	
10	30/09/2024	Վանեցյան Կարեն Ռոբերտի	Օգնություն	3873200	10000 USD
11	14/10/2024	Tony Kahve	Օգնություն	400000	
12	22/10/2024	Մատինյան Լիլիթ	Օգնություն գրքերի ծրագիր	200000	
13	29/10/2024	Մելիքյան Գուրգեն	From Global-Medic Ivana Lisa Shawn Food Project	79232	
		Ընդամենը		**7003516**	

Նախորդ համարում տպագրված ԵՊՀ ֆակուլտետների կողմից տրամադրված ֆինանսական օգնությունը հիմնադրամին վրիպակի պատճառով տպագրվում է կրկին

Հ/h	Ամսաթիվ	Ֆակուլտետ	Նպատակ	Գումար
1	1/16/2024	ԵՊՀ երկրաբան. և հետազոտ. կենտրոն ՍՊԸ	Օգնություն	300000
2	18/06/2024	ԵՊՀ իրավ. ֆակ.	Օգնություն	435000
3	27/06/2024	Սողոմոնյան Դիանա ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտ	Օգնություն	93700
4	28/06/2024	Մելիքյան Գուրգեն ԵՊՀ մանկ. կրթ. զարգացման կենտրոն	Օգնություն	100000
5	18/07/2024	ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ Ռուբեն Մելքոնյան	Օգնություն	210000
6	22/7/2024	ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ	Օգնություն	186000
7	22/07/2024	ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ	Օգնություն	365000
8	26/08/2024	ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետ Եղիազարյան Վարդան	Օգնություն	100000
8	29/08/2024	ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ	Օգնություն	115000
	27/10/2024	ԵՊՀ Ռուս.բանասիրության ֆակ.	Օգնություն	29500
		Ընդհանուր	**1,934,200**	

Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված և ՀՀ Գեղարքունիքի մարզ տեղափոխված քաղաքացիների հաշվառման

ՀՀ	Անուն, ազգանուն	Երեխաների քանակ	Տեղահանման վայր	Ներկայիս կեցություն
1	Առաքելյան Նորայր Առաքելյան Գեղեցիկ	5	ԼՂՀ, Մարտակերտի շրջ., գ. Վանք	ք.Սևան, Ս. Սևանեցի 4/10
2	Այվազյան Արամայիս Հայրիյան Կյուդմիլա	5	ԼՂՀ, Մարտակերտի շրջ. գ. Հոռաթաղ	ք. Սևան , Լճաշեն 23 փ. տ.18
3	Բեդյան Ապրես Մակարյան Հեղինե	7	ԼՂՀ, Մարտակերտի շրջ գ. Պողոսագոմեր	ք. Սևան Գեղամավան 1 փ. 1 նրբ. տ 15
4	Գրիգորյան Արթուր Գրիգորյան Համեստ	5	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ն. Ստեփանյան 2/5	ք.Սևան, Նաիրյան 3/32
5	Հակոբյան Նարեկ Բեդյան Մելինե	5	ԼՂՀ, Մարտակերտի շրջ. գ. Առաջաձոր	ք. Սևան, Զովաբեր 2 փ. 1փկղ, տ2
6	Հովսեփյան Գագիկ Ավանսեյան Աննա	5	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Թումանյանի 91.2	ք. Սևան, Գործարանային 4/4
7	Հյուսնունց Գենադի Մկրտչյան Անի	7	ԼՂՀ, ք. Մարտակերտ, Թևոսյան 1.1, փ, տ.9	ք. Սևան Զովաբեր, 2 փ. 2փկղ. տ.3
8	Հակոբյան Ներսես Փիրիյան Ռուզաննա	8	ԼՂՀ, Մարտակերտի շրջ. գ. Առաջաձոր	ք. Սևան, Զովաբեր 8 փ.1 նրբ, տ 18
9	Օհանջանյան Արմեն	6	ԼՂՀ, Մարտունու շրջ, գ. Բերդաշեն	ք. Սևան, Լճաշեն 2 փ. տ.20
10	Հովսեփյան Արտիկ Դանիելյան Արմինե	5	ԼՂՀ, Մարտունու շրջ, գ. Հաթերք	ք. Սևան , Լճաշեն 1 փ. 13, նրբ. տ 24
11	Մակարյան Վաչիկ Կարապետյան Կարինե	5	ԼՂՀ, Մարտակերտի շրջ. գ. Կոճողոտ	ք. Սևան , Գեղամավան 2փ. 1 նրբ.տ 45
12	Մկոյան Լուիզա զոհվածի ընտանիք	4	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ	ք. Սևան, Վարսեր 1փ 2 նրբ տ2

Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված և Հայաստանի տարբեր մարզ տեղափոխված քաղաքացիների ցուցակ

ՀՀ	Անուն, Ազգանուն	Երեխաների քանակ	Տեղահանման վայր	Ներկայիս կացություն
1	Խաչատրյան Լիլիթ	6	ԼՂՀ, Հազարապատ	ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս
2	Խեչումյան Նաիրա	3	ԼՂՀ, Միրիկ	ՀՀ, Արարատի մարզ, Արտաշատ
3	Խեչումյան Մերի	9	ԼՂՀ, Միրիկ	ՀՀ, Արարատի մարզ, Վերին Դվին
4	Հովհաննիսյան Հասմիկ	5	ԼՂՀ, Աղավնո	ՀՀ, Արարատի մարզ, գ. Այնթափ
5	Հակոբջանյան	4	ԼՂՀ, Բերձոր	ՀՀ, Արարատի մարզ, ք. Վեդի
6	Ղևոնդյան Ասյա	4	ԼՂՀ, Գետամեջ	ՀՀ, Արարատի մարզ, գ.
7	Պետրոսյան Ալիսա	4	ԼՂՀ, Մաճկալաշեն	ՀՀ, Արարատի մարզ, գ.
8	Վարդանյան Լուսինե	6	ԼՂՀ, Միրիկ	ՀՀ, Արարատի մարզ, գ. Հայանիստ
9	Սաֆարյան Լիանա		ԼՂՀ, Կոճողոտ	ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Աղձք
10	Ասրյան Մարիամ	5	ԼՂՀ, Եղցահող	ՀՀ, Արմավիրի մարզ, Ջրառատ

11	Առաքելյան Օֆիկ	4	ԼՂՀ, Իշխանաձոր	ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գետաշեն
12	Ամյան Քրիստինե	12	ԼՂՀ, Բերձոր	ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Էջմիածին
13	Գալոյան Մարինե	4	ԼՂՀ, Ներքին Սուս	ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Լեռնագոգ
14	Գալստյան Գայանե	4	ԼՂՀ, Հադրութ	ՀՀ, Արմավիրի մարզ, ք.
15	Թովմասյան Ժենյա	6	ԼՂՀ, Բերձոր/Ստեփանակերտ	ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գետաշեն
16	Մկրտչյան Մարո	4	ԼՂՀ, Վազգենաշեն	ՀՀ, Արմավիրի մարզ, ք.
17	Սամսոնյան Աննա	5	ԼՂՀ, Իշխանաձոր	ՀՀ, Արմավիրի մարզ, գ.
18	Սարդարյան Օվսաննա	4	ԼՂՀ, Քարվաճառ	ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գետաշեն
19	Սարգսյան Լաուրա	6	ԼՂՀ, Բերձոր	ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Ձրառատ
20	Քոչարյան Սուսաննա	5	ԼՂՀ, Խերխան	ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք
21	Մովսեսյան Գոհար	4	ԼՂՀ, Եղցահող	ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
22	Գասպարյան Գոհարիկ	4	ԼՂՀ, Բերձոր/Ստեփանակերտ	ՀՀ, ք. Երևան
23	Գրիգորյան Արևիկ	9	ԼՂՀ Հերիկ/Ճարտար/ներքին սասնաշեն/Կաթնաղբյուր	ՀՀ, ք. Երևան
24	Սահակյան Մարուսյա	5	ԼՂՀ, Շուշի	ՀՀ, ք. Երևան
25	Քամալյան Մերի	5	ԼՂՀ, Մարտունի շրջ.	ՀՀ, ք. Երևան,
26	Դանիելյան Նուբար	3	ԼՂՀ, Մաճկալաշեն/Ստեփանակերտ	ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ձրվեժ
27	Սարգսյան Մարինե	6	ԼՂՀ, Տիգրանավան	ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան
28	Պողոսյան Ծովինար	5	ԼՂՀ, Ծիծեռնավանք	ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Մրգաշեն
29	Բաղալյան Արմինե	6	ԼՂՀ, Իշխանաձոր/Իվանյան	ՀՀ, Կոտայքի մարզ, Ձորաղբյուր
30	Մարգարյան Նաիրա	6	ԼՂՀ, Վակունիս	ՀՀ, Շիրակի մարզ, գ. Մայիսյան
31	Գրիգորյան Արեգնազ	5	ԼՂՀ, Իշխանաձոր/Ստեփանակերտ	ՀՀ, Սյունիքի մարզ, Գորիս
32	Բաղդասարովա	4	ԼՂՀ, Եղցահող	ՀՀ, Սյունիքի մարզ, գ.
33	Գրիգորյան Սիդա	3	ԼՂՀ, Իշխանաձոր	ՀՀ, Սյունիքի մարզ, գ.
34	Պողոսյան Սեդա	4	ԼՂՀ, Տիգրանավան	ՀՀ, Վայոց ձոր, գ. Գետափ

Սիրելի Հայրենակից,

Եթե ցանկանում եք օժանդակել Արցախից բռնագաղթված բազմազավակ ընտանիքներին, կարող եք ձեր նվիրատվությունը ուղարկել հետևյալ հաշվեհամարներին՝

«Արդշինբանկ» ՓԲԸ, Գրիգոր Լուսավորիչ 13 փող,
Երևան, ՀՀ, SWIFT Code: ASHBAM22
«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»
Հաշվիհամարներ
(ՀՀ դրամ) 2475704668770000
(USD) 2475704668770020
(EUR) 2475704668770010

ԱԿԱՆԱՎՈՐ ԳՐՈՂԻ, ՄԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԲԱՐԵԿԱՄԻ 100-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Լրացավ ականավոր գրող, գրահրատարակչության, մամուլի և կինոյի բնագավառների երկարամյա երախտավոր, թարգմանիչ, 1960-80 թթ. հայաստանյան գրական կյանքի կազմակերպիչ ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ, մեր հիմնադրամի լավ բարեկամ ՍՏԵՓԱՆ ԱԼԱՋԱՋՅԱՆԻ ծննդյան 100-ամյակը: Հոկտեմբերի 1-ին ԵՊՀ բանասիրության ֆակուլտետում, որի շրջանավարտն էր նա 1946 թ. հայրենադարձվելուց հետո, կայացավ նշանավոր հայ մտավորականի, ականավոր արվեստագետի մեծարման հոբելյանական հանդիսավոր միջոցառում:

Թերեզա Ալաջաջյանը, Գուրգեն Մելիքյանը, Մարատ Գրիգորյանը, Արծրուն Ավագյանը

Բավական ընդարձակ և հագեցած ծրագրով այդ միջոցառումը նախաձեռնել էին ԵՊՀ ռեկտորատը, գրողի դուստրը՝Թերեզա Ալաջաջյանը, «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը»:

Հայ բանասիրության ֆակուլտետի զարդարված դահլիճը հոկտեմբերի 1-ին լեփ-լեցուն էր, ուսանողների հետ միասին ներկա էին դասախոսներ, գրողներ ու մշակույթի գործիչներ, ընթերցողներ, ինչպես և գրողի ԱՄՆ-ից ժամանած հարազատները՝ այրին՝ տիկին Սեդան և զավակները՝ Թերեզա և Զոհրաբ Ալաջաջյանները:

ԵՊՀ ռեկտոր պրոֆ. Հովհաննես Հովհաննիսյանի անունից բացման խոսք ասաց ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի պատվավոր վարիչ, պրոֆ. Սամվել Մուրադյանը:

Համառոտ բնորոշելով Ստ. Ալաջաջյան տաղանդաշատ գրողին՝ բանաստեղծին, վիպակների ու ծավալուն վեպերի հեղինակ արձակագրին, կինոսցենարիստին, գրողների միության երկարամյա քարտուղարին, «Հայաստան» հրատարակչության խմբագրության վարիչին, «Սովետական գրականություն» ամսագրի արձակի բաժնի վարիչին, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրենին՝ նա հիմնավորեց համալսարանական միջավայրում գրողի հոբելյանի միջոցառման անհրաժեշտությունը:

Ստ. Ալաջաջյանը համալսարանի այն շրջանավարտներից է, ասաց նա, որ երբեք չմոռացավ հայոց

մայր բուհը և իր գրական վաստակի ու նվաճած բարձր հեղինակության մեջ գնահատեց համալսարանական ուսումնասիրության դերը:

ԵՊՀ հայ նորագույն գրականության և քննադատության ամբիոնի վարիչ, բ.գ.թ. դոցենտ Սեյրան Գրիգորյանը, ևս ողջունելով ներկաներին Ստ. Ալաջաջյանի հոբելյանի առթիվ, կանգ առավ գրողի գործունեության կարևոր դրվագների վրա, նրա ստեղծագործություններին տվեց համառոտ ընդհանուր արժևորում՝ նշագծելով նրա

Պրոֆ. Արծրուն Ավագյանը զեկուցման ժամանակ

տեղն ու դերը մեր նորագույն գրականության մեջ:

Գրողի հոբելյանի առթիվ ներկաներին ողջունեց Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը՝ բնութագրելով Ստ. Ալաջաջյան գրական

մարդուն՝հիշելով տպավորիչ դրվագներ իրենց աշխատանքային ու գործնական հանդիպումներից:

Ապա Ստ. Ալաջաջյանի կյանքի և ստեղծագործության վերաբերյալ հանգամանալից զեկուցումով հանդես եկավ բ.գ.դ., հայ նորագույն գրականության ամբիոնի պրոֆեսոր Արծրուն Ավագյանը: Զեկուցողն անդրադարձավ գրողի անցած ճանապարհին, որն անմիջականորեն առնչվում է մեր ժողովրդի ծանրագույն ողբերգությանը՝ 1915-23 թթ. թուրքերի կազմակերպած Ցեղասպանությանը և հայկական Կիլիկիայի վերջին դիմադրական կռիվներին ու անկմանը, որոնք էլ հետագայում գեղարվեստականացվել են հենց այդ պատճառով 1924թ. Հալեպում ծնված գրողի երկերում: Նա հանգամանորեն ներկայացրեց Ստ. Ալաջաջյանի գրական ժառանգությունը, արժևորեց բանաստեղծին, թարգմանչին ու արձակագրին, մարդուն ու գրական գործչին և կենտրոնացավ հատկապես նրա գլուխգործոցի՝ « Եղեգները չխոնարհվեցին» վեպի վրա՝ կատարելով նրա գրականագիտական քաջահմուտ վերլուծություն և այն համարելով հայոց եղեռնապատումի ու հերոսական մաքառումների գեղարվեստականացման ամենավառ էջերից մեկը:

Առհասարակ բովանդակալից էր պրոֆ. Արծրուն Ավագյանի զեկուցումը. այն Ալաջաջյանի ստեղծագործությունը քննում էր մարդկության հանդեպ գրված չարիքների դեմ ժողովրդական մաքառումները պատկերող երկերի համապատկերում: Տպավորիչ էր հատկապես ավստրիացի մեծ գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա Լեռան քառասուն օրը» վեպի հետ զուգահեռումը, որով հավաստվեց թուրքական ոճրագործության դեմ հայերի պայքարի համամարդկային բնույթը և նրա գեղարվեստականացման անհրաժեշտությունը:

ՀԱՅՐԵՆԻՔ ՈՒՆԵՆԱԼՈՎ՝ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՆԱԼՆ Է ԱՆԷԾՔԸ

«Ազգի ոգին մեզ առաջնորդող ջահն է խավարի խժդժությունների միջով: Մեր խիզախության ներշնչանքն է նա: Առանց խիզախների ազգային շարժում ստեղծվել չի կարող, և խիզախությունը չի ընդունում ոչ խուճապ, ոչ նահանջ»:

Ստեփան Ալաջաջյան

2011 թ. հոկտեմբերին «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիների հիմնադրամի» գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանի նախաձեռնությամբ Բերձորի մատույցներում հիմնվեց հսկայական քարակոթողով և մրգատու ծառերով պուրակ-այգի՝ նվիրված հայ ականավոր գրող, թարգմանիչ, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ, Հիմնադրամի նվիրյալ բարեկամ Ստեփան Ալաջաջյանին: Տարիների ընթացքում բերքատու ծառերը անցորդներին էին ծառայում, պտուղները վայելողները հիշում էին Ստեփան Ալաջաջյանի հեղինակած գրքերը, հատկապես «Եղեգները չխոնարհվեցին» վեպը, որը խորհրդային տարիներին մեծ դժվարությամբ կարելի էր ձեռք բերել:

Տիգրան Մկրտչյանը իր դուստրերի՝
Մարիամի և Տաթևի հետ

Արցախյան վերջին պատերազմից հետո երկու տարի ևս բերձորցիները, ինչպես 100 տարի առաջ զեյթունցիները չէին լքում իրենց տները, պայքարում էին: Ու ինչպես գրողի հերոսները, որոնց թշնամին նմանեցնում էր եղեգների, բերձորցիներն ու հարևան Աղավնո գյուղի բնակիչները ևս թեքվեցին՝ հեռացան իրենց տներից ու բնօրրանից, բայց չխոնարհվեցին: 100 տարի հետո հայոց պատմությունը կրկնվում է, բայց դասեր չենք քաղում: «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հովանավորությամբ վերջերս՝ 2019-22թթ. վերահրատարակվել են գրողի «Եղեգները չխոնարհվեցին» վեպը և «Չսպիացած վերքի» եռահատորյակը: Հարյուրամյա հոբելյանը նույնպես կայացավ Հիմնադրամի, ԵՊՀ ռեկտորատի, հայ նորագույն գրականության և քննադատության ամբիոնի, գրողի զավակների նախաձեռնությամբ ու հովանավորությամբ: Ցերեկույթին ներկա էին գրողի հարազատները՝ կինը՝ Սեդան, դուստրը՝ Թերեզան, որդին՝ Զոհրաբը, մտերիմներ, ուսանողներ, գրողներ, նրա գործերի երկրպագուներ, հյուրեր նաև արտերկրից: Նախագահությունում էին նաև Հիմնադրամի գործադիր տնօրեն, պրոֆ. Գուրգեն Մելիքյանը, ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանը, հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Արշալույս Գալստյանը: ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի բացման և ողջույնի խոսքը ներկայացվեց ԵՊՀ հայ գրականության ամբիոնի պատվավոր վարիչ, բ.գ.դ. պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀԳՄ անդամ Սամվել Մուրադյանը: Նա կարևորեց գրողի ստեղծագործությունը որպես

Արթուր Խաչենցը ելույթի ժամանակ

իսկական գրական երևույթ, հիմնավորեց նրա հոբելյանը համալսարանում նշելու անհրաժեշտությունն ու կարևորությունը: ՀԳՄ նախագահն իր ողջույնի խոսքում բնութագրեց Ստ. Ալաջաջյանին որպես գրողի, մարդու ու գործընկերոջ: Նա մասնավորապես ասաց. «Ալաջաջյանի գրքերի վերնագրերն անգամ խոսում վկայություններ են նրա գրողական ներաշխարհի, հայոց պատմության ընկալման և ժողովրդի ապագայի ու հարատևման ուղիների մասին»: Եղան նաև այլ ելույթներ Ստ. Ալաջաջյանի հետ մտերիմ մտավորականների՝ գրողների ու դերասանների կողմից, բոլորն էլ բարձր գնահատեցին ականավոր գրողի, թե՛ գրական ժառանգությունը և թե՛ մարդկային կերպարը: Նշվեց նաև, որ հիվանդությունը բուժելու նպատակով Ստ. Ալաջաջյանը 2001 թ-ից բնակություն էր հաստատել Լոս Անջելեսում: 2008թ.-ի սեպտեմբերի 19-ին նա ընդամենը 10 օրով վերադարձել էր Հայաստան: Այդ օրերին էլ նա ՀՀ մշակույթի նախարարության կողմից պարգևատրվել է Ոսկե մեդալով: Վախճանվել է Լոս Անջելեսում, 2010թ-ի դեկտեմբերի 23-ին: Հավարտ հոբելյանական հանդիսավոր միջոցառման՝ ողջույնին երախտագիտական խոսքով հանդես եկավ գրաղի դուստրը՝ Թերեզա Ալաջաջյանը: Նա շնորհակալություն հայտնեց ցերեկույթի կազմակերպիչներին և բոլոր ներկաներին նվիրեց 2019-22 թթ լույս տեսած «Եղեգները չխոնարհվեցին» և «Չսպիացած վերք» գրքերը: Տեղեկացվեց նաև, որ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» կողմից արդեն քանի տարի նշանակվում է Ստ. Ալաջաջյանի անվան կրթաթոշակ, որը հատկացվում է բանասիրական ֆակուլտետի լավագույն ուսանողներին: Այս տարվա անվանական թոշակառու, հայ բանասիրության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի Անահիտ Վարդանյանն ընթերցեց հատված «Եղեգները չխոնարհվեցին» վեպից՝ շնորհակալություն հայտնելով կրթաթոշակ նշանակողներին: Հանդիսավոր միջոցառմանը հաջորդեց հագեցած գեղարվեստական մասը: Կոմիտասի ստեղծագործությունների, իր հեղինակային և ժողովրդական երգերի բարձր արվեստ կատարմամբ հանդես եկավ ազատամարտիկ երգիչ, Արցախի Հանրապետության վաստակավոր արտիստ, կիթառահար Տիգրան Մկրտչյանն իր երկու դուստրերի հետ: Արցախյան անուշ բարբառով իր երգերով ներկաները մեծ ոգևորությամբ ունկնդրեցին հանրահայտ կիթառիստ երգիչ Արթուր Խաչենցին:

Զոհրաբ Ըռքոյան

Էդվարդ Միլիտոնյանը ելույթի ժամանակ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻՑ՝ «ՃԵՐՄԱԿ ԱՆՈՒՐՋՆԵՐ»-ՈՎ «ԿՏՈՐ ՄԸ ԵՐԿԻՆՔ». ՍՏԵՓԱՆ ԱԼԱՋԱՋՅԱՆԸ 100 ՏԱՐԵԿԱՆ Է

Նա ծնվեց Սիրիայում, մեծացավ Հայաստանում ու վախճանվեց ԱՄՆ-ում, նրա գրիչը ժամանակի զարկերակն էր, տառապանքը՝ մեծ ու համամարդկային: 1924թ. Կիլիկիայի մեծ ջարդերից մազապուրծ եղած ու Հալեպ գաղթած ընտանիքում ծնվեց Ստեփան Ալաջաջյանը:

Նրա դուստրը՝ Թերեզա Ալաջաջյանը պատմում է.

-Գրողի ամենահայտնի վեպը՝ «Եղեգները չխոնարհվեցին», հենց այդ գաղթի պատմությունն է: Կերպարներից մեկը իր հայրն է, և գրեթե մեծամասնությունները վավերական է, նրանք ապրել են Զեյթունում: Երբ կարդում եմ, հիշում եմ նույնիսկ այն մարդկանց կերպարները, ում ճանաչում եմ:

Թերեզա Ալաջաջյանը հոր մահից հետո հրատարակել է նրա անավարտ գործերը: Պատմում է՝ հայրը 49 տարեկանում հիվանդացավ քաղցկեղով: Բժիշկները հեռացրին ձայնալարերը, խոսում էր շշուկով կամ հատուկ սարքի օգնությամբ: Բուժման նպատակով ընտանիքը տեղափոխվեց Լոս Անջելես, որտեղ Ալաջաջյանը դստեր հետ հիմնեց «Առագաստ» ամսագիրը. «Ինքն ուներ մի անավարտ վիպակ,-շարունակեց գրողի դուստրը, որը առողջության պատճառով չհասցրեց հրատարակել, իր մահը խանգարեց:

Կյանքի վերջին տարիներին որոշեց վերադառնալ վիպագրությանը, քանի որ երբ բնակվում էր ԱՄՆ-ում, զբաղվեց միայն հուշեր գրելով, վերջում վիպակ գրեց, որը չհասցրեց վերջացնել: Որոշեցի դա տպագրել, և իր մահից առաջ խնդրել էր՝ մենք միասին տպագրել էինք «Առագաստ» ամսագիրը գրեթե 8 տարի, խնդրեց, որ բոլոր նախաբանները միասին տպագրվեն, այդ երկուսը միասին կոչվեց «Հորձանուտ», և տպագրեցի:

Գրականագետ, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի պատվավոր վարիչ, պրոֆ. Սամվել Մուրադյանն ասում է.

- Ստեփան Ալաջաջյանն ունի հարուստ կենսագրություն և բեղմնավոր, տաղանդավոր արձակագիր լինելով մեծ դերակատարություն է ունեցել 1960-1980-ական թթ հայաստանյան գրական կյանքում: Նա Խորհրդային Հայաստան եկավ մեծ ներգաղթի ժամանակներում, 1946 թվականին: 1951 թ. ավարտել է ԵՊՀ հոգեբանության և տրամաբանության բաժինը: Այն ժամանակ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետն ուներ այդպիսի բաժին: Ալաջաջյանը խոսում էր վեց լեզվով: Նա թարգմանել է Շեքսպիրի, Ժան Պոլ Սարտրի, Վիլյամ Սարոյանի գործերը: Նաև կինոսցենարների հեղինակ էր, ռեժիսոր Հենրիկ Մալյանի մոտ ընկերը: Նրա սցենարներով են ստեղծվել մեր ժողովրդի համար շատ սիրելի երկու ֆիլմեր: Դրանցից մեկը հանրահայտ «Կտոր մը երկինք»-ն է, մյուսը՝ «Ճերմակ անուրջները»՝ երկուսն էլ ստեղծված Վահան Թոթովենցի երկերի հիման վրա:

-Նա, շարունակում է պրոֆեսորը, Հայաստանի գրողների միության վարչության քարտուղարն էր տարիներ շարունակ Եղիշե Չաենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրենը, «Սովետական գրականություն» ամսագրի արձակի բաժնի վարիչը,«Հայաստան»հրատարակչությանգեղարվեստական գրականության խմբագրության վարիչը: Պրոֆ. Մուրադյանը կարևորում է Ստեփան Ալաջաջյանին ոչ միայն որպես գրողի, այլև՝ թարգմանչի և գրահրատարակչական բնագավառի ողջամիտ գործչի: «Նա ուներ իր ժամանակների համար չընդունված ու նույնիսկ վտանգավոր քաղաքացիական խիզախություն,-ասում է պրոֆեսորը:

-Դրա վառ օրինակներից մեկը Հովի. Շիրազի «Անի»պոեմի մասին նրա գրավոր երկու կարծիքներն են: Երբ քաղաքական դրդապատճառներով գրողներից ոմանք վերին հրահանգով դեմ էին արտահայտվում այդ ստեղծագործությանը, Ալաջաջյանը խոսում էր արդարության լեզվով:

Արխիվներում ես գտա Ստեփան Ալաջաջյանի՝ տարիների ընդմիջումով գրած երկու կարծիքները այդ պոեմի մասին: Փաստորեն, երկրորդ անգամ էլ բարձր գնահատելով պոեմի թե՛ պատճառաճանաչողական և թե՛ գեղարվեստական մեծ արժեքը, հիմնավորել է նրա տպագրության հրատապ անհրաժեշտությունը: Ժամանակին դա մեծ խիզախություն էր»:

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՐՅԱՆ
Հայաստանի Հանրային ռադիո

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝
ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ Բան, գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝
Ավագյան Ա.-Բ.գ.դ, պրոֆեսոր
Մելիքյան Գ., բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալ., պ.գ.թ., պրոֆեսոր
Նյութերի դասակարգումը՝ Հոգաբարձության խորհրդի անդամ՝ **Մերի Մելիքյանի**
Համարի շարվածքը, ձևավորումը՝ Ս. Մուրադյանի,
Լուսանկարները՝ **Զ. Ըռքոյանի**:
Տպաքանակը՝ 99
Թերթը բաժանվում է անվճար:
Խմբագրության հասցեն՝
Երևան-0025, Աբովյան 52 Ա, հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 212 սենյակ, Հեռ.: 060710617; 055-522936; 010-552537